**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**
**ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.......” ........................ 2020թ.                                N................................

«ԳՐԻԳՈՐ» ՍՊԸ-ի
տնօրեն Հ. Ալոյանին
Հասցե՝ ք. Երևան, Սարյան 24, բն.46

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
(Վարչական վարույթ հարուցելու և լսումներ իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Ալոյան

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1715-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ԳՐԻԳՈՐ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լսումները տեղի կունենան 2020 թվականի դեկտեմբերի 09-ին, ժամը 11:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Խնդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի իրականացման համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1715-Ա հրամանը – 2 թերթ:

01.12.2020

X

ԼԻԼԻԱ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Հարգանքով՝

Signed by: SHUSHANYAN LILIA 7605910584

Լ. Շուշանյան

Կատարող՝ Լիլիթ Փաշյան, Իրավաբանական վարչություն,
նախարարության իրավական շահերի պաշտպանության բաժնի պետ
Հեռախոս՝ 010 515 171